ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
«17» 09 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000075

Ձեռնարկողը՝ *Քաղաքացի Տիգրան Հովսեփյան*
ք. Երևան, Գ.Հովսեփյան 12/8

Գործունեությունը՝ ***Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության 1/1 հասցեում գյուղմթերքի և սննդամթերքի վերամշակման և փաթեթավորման գործարանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ / Ա. Թարգյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000075

<17> 09 2020թ.

Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության 1/1 հասցեում նախատեսվող գյուղմթերքի և սննդամթերքի վերամշակման և փաթեթավորման գործարանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	քաղաքացի Տիգրան Հովսեփյան
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Ձորաղբյուր գյուղ

Քաղաքացի Տիգրան Հովսեփյանի կողմից Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության 1/1 հասցեում նախատեսվում է կառուցել գյուղմթերքի և սննդամթերքի վերամշակման և փաթեթավորման գործարան:

Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 0.37406հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:

Նկարագրական մաս. Կառուցապատման ենթակա տարածքը հարթ չկառուցապատված տարածք է: Գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում: Տարածքում հողաբուսաշերտը բացակայում է, բնության հատուկ պահպանվող կամ պատմամշակույթային հուշարձաններ չկան:

Հարևանությամբ գյուղատնտեսական հողամասեր են և համայնքային ճանապարհներ:

Նախագծով նախատեսված են երկու հիմնական մասնաշենքեր՝ արտադրական և օժանդակ: Արտադրական մասնաշենքը հատակագծում ունի ուղղանկյան ձև 18.6x84.6մ առանցքային չափերով: Նախագծվող շինությունը իրենից ներկայացնում է մեկ հարկանի կառույց: Ծածկը երկթեք է՝ սենդվիչ պանելներով ամրացված մետաղական

ֆերմաներին: Արտադրամասի մասնաշենքում տեղաբաշխված են պահեստային տարածքներ, փաթեթավորման տեղամաս և վարչական սենյակներ: Օժանդակ մասնաշենքը հատակագծում ունի ուղղանկյան ձև 20.4x6.4մ առանցքային չափերով: Նախագծվող շինությունը իրենից ներկայացնում է երկու հարկանի կառույց: Տանիքը միաթեք է գունավոր ալիքավոր թիթեղյա ծածկույթով: Առաջին հարկում նախատեսված են պահեստային տարածքներ, իսկ երկրորդ հարկում պահակակետ և վարչական սենյակներ:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է տվյալ միջավայրում առկա կառույցներին և չի հանդիսանում տեսադաշտի խոչընդոտ շրջակա բնակչության համար:

Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

Հողատարածքի ընդհանուր մակերես՝ 3.740,6մ^2

Կառուցապատման մակերես՝ 1.458,8մ^2

Կանաչապատման մակերես՝ 2.281,8մ^2:

Գործարանի էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի:

Արտադրամասի գազամատակարարումը նախատեսվող ծախսով իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի՝ միանալով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ ցանցին, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ:

Արտադրամասի ջրամատակարարումը նախատեսվում է խորքային հորից, որի համար օրենքով սահմանված կարգով շրջակա միջավայրի նախարարությունից պետք է ստանալ ջրօգտագործման և ջրահեռացման թույլտվություն: Նախատեսվում է ստորգետնյա 80-100սմ խորությամբ անցկացնել 32մմ շառավիղով խողովակ, մոտ 100 մետր երկարությամբ: Ջրի սնուցումը կիրականացվի պոմպի միջոցով:

Շինարարական աշխատանքների տևողությունը հաշվարկվել է 24 ամիս:

Շինարարության ժամանակ բնառեսուրսից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու, կենցաղային նպատակների համար: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (7 մարդ) և կազմել է՝ 0.16մ^3/օր: Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 540մ^3/շին.ժամ կամ 0.75մ^3/օր: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 659,5մ^3/շին.ժամ:

Երկաթբետոնե հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 2.250մ^3 ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ, որից 1.100մ^3 կօգտագործվի որպես հետլիցք, իսկ մնացած՝ 1.150մ^3, կօգտագործվի տարածքի հարթեցման նպատակով:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում կենցաղային աղբն է՝ 980կգ և շինարարական աղբը՝ 15տոննա: Շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը՝ կտեղափոխվի մոտակա աղբավայր:

Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Նոր կառուցվող գործարանի շինարարության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք կարող են առաջանալ հողային

աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի այրման արդյունքում: Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները կանխարգելելու և շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված է.

- շինարարական աշխատանքների /փոշու առաջացման աշխատանքներ/ ընթացքում, փոշենստեցման նպատակով, ջրցանի իրականացում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ,
- ջրցանի հաշվարկում այնպես, որ չառաջանա մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական և կոլեկտիվ պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի մոտակա բժշկական հաստատությունը,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկումը համապատասխան բարձրության թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը,
- մթնոլորտային օդ արտանետվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- շինարարական նյութերի տեղադրում բետոնապատ մակերեսի վրա,
- տեղումներից առաջացող շինարարական հոսքաջրերի ուղղորդում՝ պարզարան:

Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվելու է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25մ^3 ծավալով տարողություն, որի ծավալը հաշվարկվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500մ^2 մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենալու մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը օգտագործվելու է տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը հեռացվելու է որպես շինաղբ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի մաքրում և առաջացած թափոնների տեղափոխում՝ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր, ինչպես նաև կանաչապատում՝ տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականությամբ և բարեկարգում: Տարածքում կցանվի սիզախոտ, կտնկվեն բերքատու ծառեր: Մրգերի լվացման համար օգտագործվող ջուրը սեզոնին կկուտակվի տարողության մեջ և կօգտագործվի ոռոգման նպատակով, իսկ հետագայում ջրօգտագործման ընկերության ոռոգման ցանցից: Ոռոգման ձևը կաթիլային՝ տարածքում անցկացնելով պլաստմասե խողովակներ:

Ամբողջ շինարարաության ընթացքում բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է՝ 1000000 դրամ:

Պատճառաբանական մաս. Նախնական գնահատման հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել է քաղաքաշինության կոմիտեն: Դիտողությունների և առաջարկությունների արդյունքում հայտը լրամշակվել է: Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Աջափնյակ վարչական շրջանի Լենինականի /Հասրաթյան/ 15 հասցեում գործունեության իրականացման վերաբերյալ անցկացվել է հանրային քննարկում, որը հանրության կողմից արժանացել է հավանության:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում խստագույնս պահպանել բնապահպանական օրենսդրության դրույթների կատարումը, քաղաքաշինական նորմերը:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերն ու կանոնները՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարաի 2017թ. մարտի 28-ի թիվ 12-Ն հրամանի պահանջների:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների հետ համաձայնեցված:
- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով աղմուկի և ճանապարհների բեռնվածությունը:
- Իրականացնել շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրային որոշման պահանջներին:
- Էլեկտրահաղորդիչ գծերի, խմելու ջրի խողովակաշարի կամ այլ չնախատեսված կոմունիկացիաների հետ հատման հատվածներում շինարարական աշխատանքներն իրականացնել համապատասխան մարմինների թույլատվությամբ:
- Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումն ու ժամկետները, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Անհրաժեշտ է տարածքի կանաչապատումն իրականացնել հաստատված դենդրոնախագծի համաձայն:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Քաղաքացի Տիգրան Հովսեփյանի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության 1/1 հասցեի գյուղմթերքի և սննդամթերքի վերամշակման և փաթեթավորման գործարանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ նշված պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Մասնագետ՝ Մ. Ավետիսյան